

ԱՌԱՔԵԼԱՇԱԻԻՂ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԵՒ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՆՈՒՒՐԱԿԻՆ ՍԲՈՅ ԱԹՈՌՈՑ ՄԻԱԾՆԱ ԻՋԻ:

Հրատ. Զալալյան, Բ, 467, Ե. Շահագիզ, 62

Ս. Համարձման եկեղեցու ըսկում եղել են բազմաթիվ ապականաբարեր, որոնց արձանադրություններէց Հիշաաակելի են «Գողոթյան հայ օրիորդաց դպրոցի» Հիմնադիր Մկրտիչ Գողոթյանին ու նրա ամուսին «Հաջի մամա» Սրբուհի Գողոթյանին: Մ. Գողոթյանի շիրմաքարին զրկած է եղել:

507. ԱՍՏԱՆՈՐ ԱՄՓՈՓԻՆ ՈՍԿԵՐՔ ՆՈՐՈՅ ՆԱԽԻՋԵՒԱՆԱՅ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՏՈՒԵԼԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՅ ՄԿՐՏՁԻ ԿՈԿՈՅԱՆ, ԾՆԵԼՈՅ Ի 1797 ԱՄԻ ԵՒ ԴԱՐՁԵԼՈՅ ՅԱՍՏՈՒԱԾ Ի 63 ԱՄԱՑ ՀԱՍԱԿԻ ԻՐՈՒՄ: ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ, ՈՐ ԿՏԱԿԱՒԱՆԴԵՑԱԻ ՅԵՐՁԱՆԻԿ ՀԱՆԳՈՒՑԵԼՈՅ ԿԱՆԳՆԵԼ Ի ՍԵՓԱԿԱՆ ԾԱԽՍ ԻՐ ՎԱՍՆ ԿԹՈՒԹԵԱՆ ԶՔԱՒՈՐ ՕՐԻՈՐԴԱՑՆ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԻՍ ԲԱՐԵԳՈՐԾ ԿԵՆԱՑ ՆՈՐԻՆ ՅԵՇԱՏԱԿ ՅԱԻԵՐԺԱԿԱՆ ԵՒ ՓԱՌԱՒՈՐ ԿԱՑՑԷ ԱՊԱԳԱՑԻՑ. 27 ՅՈՒԼԻՍԻ 1866 ԹՈՒՒՆ:

Հրատ. Ե. Շահագիզ, 62

Եկեղեցու արծաթյա խաչերն ունեցել են Ռձնթ (1700), Ռձժե (1666) և 1890 թվականները:

Ս. ԳԵՎՈՐԳ

Նոր Նախիջևանի ս. Գեորգ եկեղեցին դանվելիս է եղել քաղաքի արևմտյան կողմում, Դոն գետի ափին: Ըստ Հ. Սրգսլթյանի «Դաւթար»-ի Հիմնադրվել է 1783 թ. և օծվել 1787 թ.: Կառուցվածքային առանձնահատկություններով նույնաաիպ է նախորդներին: Հիմնական վերանորոգման է ենթարկվել 1853 և 1892 թվականներին:

Ս. Գեորգի պաաերին եղել են ըադմաթիվ խաչքարեր, որոնց արձանադրություններին ընթերցումը, եղծված լինելու պաաառով, մեծ դժվարություններ է հարուցել Ե. Շահագիզին: Խաչքարերի մի մասը ծածկված է եղել յուղաներկով: Ս. հա զրանցից մի քանիսը՝ Ե. Շահագիզի վերծանությամբ:

508. Խաչքար, քանդակազարդ, ադուցված է եղել հարավային դռան ճախ կողմին.

ԿԱՆԳՆԵՑԱՎ ՍԲ ՆՇԱՆՍ Ի ԲԱՐԵԽՕՍՈՒԹԻՒՆ ՄՀԳՍԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԻՆ ԵՒ ԿԵՆԱԿՑԻՆ... ՊԻՔԱՑԻՆ, ՈՐԴԻՈՑՆ ԳՐԻԳՈՐԻՆ, ՍՏԵՓԱՆՆՈՍԻՆ ԵՒ ՄԻՆԱՍԻՆ, ԴՍՏԵՐԱՑՆ ԽԱՍՊԻՔԱՑԻՆ ԵՒ ՊԱՀԱՐԻՆ ԵՒ ՀԱՃԻ ՄՕՐՆ ԵՒ ՇԻՀՐԻՆ ԵՒ ԱՄԵՆԱՑՆ ԶԱՐՄԻՑՆ. ԹՈՒՒՆ ՌՃԼԵ (1886). ԶԵՌԱՄԲ ՍԱՐԳԻՍ ՎԱՐՊԵՏԻՆ:

Հրատ. Ե. Շահագիզ, 63

509. Արծաթյա մասնաաուփի վրա՝ ՅԵՇԱՏԱԿ Է ՄՀՏՍԻ ՍՏԵՓԱՆԻ ԳԵՆՋԵՑԵԱՆ. 1849, Ի ՍԲ ԳԷՈՐԳ, ՆԱԽԻՋԵՒԱՆ:

Հրատ. Ե. Շահագիզ, 64

510. Ս. Գեորգի պահաաանում եղած պղնձյա թիթեղին՝

ՎԵՐԱՆՈՐՈԳԵՑԱԻ ՏԱՃԱՐՍ ՅԱՆՈՒՆ ՍՐԲՈՅ ԳԷՈՐԳԱՑ ԶՕՐԱՎԱՐԻՆ ԱՐԳԵԱՄԲ ԵՒ ԾԱԽՈՒՔ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԱՑ ԵՐԿՐՈՐԳ ԿԱՐԳԻ ՀԱՅԿԱՋՈՒՆ ՎԱՃԱՌԱԿԱՆԻ ՄԱՏԹԷՈՍԻ ԽԱՉԱՏՐԵԱՆ ԵՐԵՑՓՈՒՅԱՆԻ՝ ԱՌՆ ԱՄԱՍԻՐԻ ԵՒ ԲԱՐԵՊԱՇՏԻ ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1853 ԵՒ ՄԵՐՈՅ ԱՋԳԱԿԱՆԻ ՌՅԲ, Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ԱՄԸՆՏԻՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ, ՅԱՌԱՋՆՈՐԳՈՒԹԵԱՆ ՌՈՒՍԱՐՆԱԿ ՀԱՅՈՑ ՏԵԱՌՆ ՄԱՏԹԷՈՍԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ:

Հրատ. Ե. Շահագիզ, 64

Ս. Գևորգ եկեղեցում եղել են մի շարք խաչեր ՌձԽԱ (1692), ՌՀԳ (1624), ՌՀԵ (1626), ՌձԶԷ (1738) թվականներով:

Ս. ԿԱՐԱՊԵՏ

Ս. Կաղապետը տեղացիներն առ. այսօր կոչում են «Հանգստարանի եկեղեցի»: Ցարգեանգուն և գործող այս փոքրիկ եկեղեցին հիմնադրված է 1875 թ., օծվել է 1881 թ. հունիսի 11-ին: Նպասաավորողը եղել է Ակուլինե Պողոսյան Ալաճալյանը, իսկ վերակացուն՝ նրա ազգական Հովհաննես Խաթրանյանը: Կառուցվել է բուն հայկական ճարտարապետության ոճով՝ ճարտարապետ Սաղոնովի նախագծի համաձայն:

Արաքունա հիշեցնում է Թովմի գյուղի ս. Փրկիչ եկեղեցին: Հնագույն արձանագրություններից ոչ մեկն այժմ չի պահպանվել, ուստի պահպանվում ղեկեղում ենք Ե. Շահաղիղի հետեյալ վերծանությունները.

511. Բեմի ճակատին մարացված մարմարե հուշասլին՝

ԵԿԵՂԵՑՈՒ ՍՐԲՈՅՆ ՅՈՂԱՆՆՈՒ-ՄԻՐՏԶԻ ՀԻՄՆԵԱԼ Ի 1875 ԵԻ ՕՄԵԱԼ Ի 11 ՅՈՒՆԻՍԻ 1881 ԱՄԻ ԱՂՔԱՏԱՆՈՅԱԻ ԵԻ ՀՈԳԵՏԱՄԲ ՀԱՆԴԻՐԶ ԿԱՌՈՒՅԱԻ ԿՏԱԿԱԻԱՆԴՈՒԹԵԱՄԲ ԵԻ ԾԱԽՈՒԲ ԱԶՆՈՒՀԻ ԱԿԻԼԻՆԵԱՅ ՊՈՂՕՍԵԱՆ ԱԼԱՃԱԼԵԱՆՑ Ի ՀԱՆԳՍՏԱՐԱՆԻՍ ՀԱՅՈՑ ՆՈՐ ՆԱԽԻՋԵԻԱՆԱՅ:

Հրատ. Ե. Շահաղիղ, 65

Ս. Կարապետ եկեղեցու գերեզմանոց

512. Ակուլինա Ալաճալյանցի մարմարակերտ շիրմաքարին՝

ԱՍՏ ՀԱՆԳԶԻ ՄԱՐՄԻՆ ԱԶՆԻԻ ՏԻԿՆՈՋ ԱԿՈՒԼԻՆԵԱՅ ՊՈՂՕՍԵԱՆ ԱԼԱՃԱԼԵԱՆ, ՈՐ Ի ՏՈՀՄԷ ԽԱԹՐԱՆԵԱՆ, ՎԱԽՃԱՆԵԼՈՅ 3 ՍԵՊ. 1871 ԱՄԻ, Ի ՀԱՍԱԿԻ 62 ԱՄԱՑ:

513. Նույն շիրմաքարի մյուս կողմին՝

ՇԻՆՈՒԱԾՔԱՅ ԵԿԵՂԵՑՈՒՅՍ Ս. ՅՈՂԱՆՆՈՒ-ԿԱՐԱՊԵՏԻ, ՀՈԳԵՏԱՆ ԵԻ ԱՂՔԱՏԱՆՈՅԻ ՆՈՐԻՆ ԿԱՆԳՆԵՑԱԻ ԸՍՏ ԿՏԱԿԻ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՏԻԿՆՈՋ ԱԿԻԼԻՆԵԱՅ ԱԼԱՃԱԼԵԱՆ՝ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԵՂԲՕՐՈՐԴԻՈՅ ՆՈՐԱ ՅՈՂԱՆՆՈՒ ԽԱԹՐԱՆԵԱՆ:

Հրատ. Ե. Շահաղիղ, 66

Այս ղերեղմանոցում են թաղված Գասպար Մարկոսյանը, Պոպովը, Նիկողայոս Աճեմյանը և շատ անվանի հայեր:

514. Ն. Աճեմյանի՝ սպիտակ մարմարից կերպված մահարձանին՝

ԲԱՐԵԳՈՐԾ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՃԵՄԵԱՆ, 1818-ԱՊՐԻԼԻ 17, 1888 ՅՈՒԼԻՍԻ 10:

Հրատ. Ե. Շահաղիղ, 67

1967թ. ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիճաբարական արշավախումբը այս գերեղմանոցում գրանցել է հետևյալ կոթողների վիճական արձանագրությունները.

Իրար կից կառուցված երեք գամբարաններ, սև մարմարից, կարմրավուն գրանիտ պատվանդաններով: Արևմտյան կողերին հայերեն արձանագրություններն են, արևելյաններին՝ նույն բովանդակությամբ ռուսերեն:

515 ա. ԱՆՆԱ ՊԵՏՐՈՍԵԱՆ / ԿԱՐԱՊԵՏ-ՕՂԼՈՒԵԱՆ / ԾՆԵԱԼ Ի 1 ՄԱՅԻՍԻ 1830 ԱՄԻ / ՎԱԽՃԱՆԵԱԼ / Ի 12 ԱՊՐԻԼԻ 1875 ԱՄԻ / ՆՈՐ ՆԱԽԻՋԵԻԱՆ: